եւ ի հայրապետութեանն Տեառն Տէր Մելքիսեթ կաթողիկոսին եւ վարդապետին իմոյ Գրիգոր քաջ րաբունապետին Կեսարացւոյ...» (*Տաշեան, Մայր Ցուցակ, էջ 778*)։

1619ին դարձեալ նոյն գրչին Կուտինայի մէջ գրել տուած է ուրիշ ձեռագիր մը որուն յիշատակարանը համանման բառերով խմբագրուած է (Հ. Բարսեղ Սարգիսեան, Ցուցակ Վենետիկի, էջ 274)։

Նշանակելի է որ այս յիշատակարաններուն մէջ իր հովուական պաշտօններուն մասին ակնարկ չկայ։

Աղաւնունի եպս. (Միաբանք և Այցելուք, *էջ 320) կը հաստատէ թէ անիկա Երուսաղէմ ալ գացած է, Գրիգոր Պարոնտէրի իշխանութեան ատեն (1613–1645)։*

Ամէն պարագայի մէջ Յակոբ եպս. Բէօթահիացի նոյնիսկ եպիսկոպոսանալէն յետոյ աշակերտած և գործակցած է Գրիգոր վրդ. Կեսարացիին, որուն փոխանորդած է ի Կ. Պոլիս և ի Կեսարիա։ Տրդատ եպս. Պալեան կ'ըսէ թէ «այնպէս կ'աւանդուի թէ, Գրիգոր Կեսարացիի Կ. Պոլսոյ պատրիարքութեան միջոցներուն, Յակոբ եպս. Կուտինացին Ս. Կարապետի վանքի առաջնորդ–վանահայրութեան պաշտօնին մէջ գտնուած է և կամ իբր փոխանորդ ղրկուած է Գրգոր Կեսարացիի կողմէն»